

կատարեց բանալով աչքերը ի ծնէ կուրին (Յովհ. Թ. 1-34):

Պորտոյի անանուն ուխտաւորը կ'ըսէ թէ Սելովամի աւազանը շրջապատուած է քառակուսի սրահով մը: Անիկա այն վիճակը ունէր՝ ինչպէս թողուած էր Հռովմայեցիներու կողմէ Երուսաղէմի կործանումէն յետոյ, այսինքն միւսնոյն վիճակը զոր ունէր՝ երբ Յիսուս ի ծնէ կոյրը հոն ղրկեց, վասնզի չենք կրնար ենթադրել թէ Ադրիանոսի օրով նորոգուած էր ան: Արդի աւազանը 16 մ. երկայն, 4-5 մ. լայն. եւ 6 մ. խորութեամբ շինուած է նոյն աւերակներուն վերայ: Հիւսիսային և արեւմտեան կողմերը տակաւին կը տեսնուին Զ. դարուն նորոգուած աւազանին պատերը՝ շատ մը գորշ կրանիթեայ սիւներու կտորներով:

Ի ծնէ կուրին բժշկութեան հրաշքի օրերէն սկըսեալ՝ Սելովամի աւազանին ջուրերը ժողովրդական դարձան և ստացան բուժիչ զօրութիւն մը հաւատքով մօտեցողներուն համար: Քրիստոնէական առաջին դարերուն իսկ, հոն տակաւին եկեղեցի չհաստատուած, աչազուրկեր ամէն կողմէ կը դիմէին բժշկութիւն գրտնելու համար, մասնաւորապէս Եգիպտոսէն եկողներ կը վկայուի թէ Սելովամ կ'իջնէին նոյն նպատակաւ: Երուսաղէմի Սոփրոնիոս հայրապետը Կիւրոս և Յովհաննէս մարտիրոսներու վկայարանութեան մէջ կը յիշատակէ թէ նոյն վկաները տեսիլքով մը թելագրած են Ս. Մինաս եգիպտացի զօրականին և վերին Եգիպտոսի վանականներէն մէկուն որ Սելովամի ջուրերուն

գեց, անմիջապէս դիուեցաւ աղբիւրին ջուրը, եւ այդ պահառաւ ան կոչուած է **Սելովամ** որ կը նշանակէ «Առաքեալ» (P. G. M-43, 397):